



2016թ. հունիսի 8-ին Երեբունիի հայ-ֆրանսիական հնագիտական արշավախումբն անփոփել է 2008 թվականից Երեբունի ամրոցի միջնաբերդում իրականացվող պեղումների արդյունքները: Պեղումների վերջին փուլը նշանավորվել է մի շարք բացահայտումներով, որոնց մասին Երեբունի թանգարանում հանգամանալից զեկույցներով հանդես են եկել ֆրանսիական կողմի ղեկավար Ստեֆան Դեշամպը և հայկական կողմի ղեկավար Միքայել Բադալյանը:

Ողջունելով հնագիտությամբ հետաքրքրվող շրջանակին՝ «Երեբունի» արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանն անդրադարձել է Երեբունիում 2008-2016թթ. հայ-ֆրանսիական համագործակցությանը և շնորհակալություն հայտնել 8 տարիների ընթացքում պեղումների իրականացմանը օժանդակած կառույցներին՝ Երևանի քաղաքապետարանին, ՀՀ Մշակույթի նախարարությանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին և, առանձնապես, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը:



Հաջողված համագործակցության վերաբերյալ շնորհավորական խոսքերով հանդես են եկել ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանի տեղակալ Նիկոլաս Ֆայեն, ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արև Սամուելյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը: Հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբի կողմից ներկայացվող ելույթները եզրափակել են արշավախմբին վերջերս միացած իրանցի հնագետները: Վերջիններիս արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը հանձնել է հնագիտության ոլորտում հայ-իրանական համագործակցությունը խորհրդանշող հավաստագրեր: